Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Հ. Մելիք-Գրիգորյանց

Հայրենիք

Եր. 1905

891.99
S-38

891.99-2
Ց-38
№ 9275
10 NOV 2011
1001 / 4083

# ՎԱՅՐԵՆԻ

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ
## ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

**ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ**

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

9

1905

*Տպարան Է. Տէր-Գրիգորեանցի։*

*ԵՐԵՒԱՆ*

14 ,08. 2013
58283

Дозволено цензурою. 13 Августа 1905 г.
г. Тифлисъ.

Настоящій водевиль, подъ заглавіемъ „ДИКАРЬ“, разрѣшенъ помощникомъ Главноначальствующаго къ представленію на сценахъ края. Января 19 дня 1904 года, г. Тифлисъ.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

*ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, մեծ պաշտօնեայ,*
*ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ, նորա կինը։*
*ՄԱՆԻԱ, նորանց դեռահաս աղջիկը։*
*ԲԱԴԱԼ, Մարկ Ադամիչի եղբօր որդին։*
*ՍԵՐԳԷՅ, ծառայ։*

*Անցքը պատահում է Պետերբուրգում։*

# ՎԱՅՐԵՆԻ

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ։

ТИФЛИССКАГО СОБРАНИЯ БИБЛИОТЕКА

Տեսարանը ներկայացնում է շքեղ ընտանեկան սենեակ։ Խորքում դուռը. աջ դուռը տանում է Եկատերինա Գէօրգիեվնայի ննջարանը, իսկ ձախ՝ Մանիայի։ Բեմի վերայ շքեղ կահ կարասիք։ Աջ եւ ձախ անկիւններում դրուած են գեղեցիկ տրոպիքական ծառեր։ Դիւանին եւ բազկաթոռները շինուած են արտասահմանի ամենաճկուն զսպանակներով (пружина), այնպէս որ նորա վերայ նստողը համարեա թաղվում է նորանց մէջ։ Մի փոքր խորքում դրուած է նաեւ ճօճանակ-աթոռ (качалка)։

*Անհրաժեշտ գիտելիք։— Ընդհանրապէս Մարկ Ադամիչի, կնոջ և դստեր խօսակցութեան ժամանակ՝ ականջ է ծակում նորանց չափազանց ռուսական ակցենտը, բառերի ելեւէջները, տառերի արտասանութիւնը և վերին աստիճանի նրբութիւնը։ Առանձնապէս պէտք է ուշք դարձնել ն, լ, դ, հ, խ, ռ, և յետոյ ր, ց, ս, մ, յ, տառերի վերայ, որոնք աւելի քան նուրբ և կակուղ են արտասանւում, ինչպէս օրինակ՝ ն-нь, լ-ль, և այլն. կամ՝ տեսն՛էլ-տեսньել, կարել՛ի-կարեльի, աս՛էլ-ասьէլ, բայց ինարկէ ոչ ամէն դէպքում. այդ պատճառով նրբութեանց տեղերը և տառերը որոշելու համար դըրւած են տառերի գլխին փոքրիկ ստորակէտներ։ Իսկ դ, խ, հ, յ, տառերը միշտ և ամէն դէպքում շատ նուրբ են հնչւում և շատ տեղ հ, ք, և ուրիշ տառերի տեղ գործածւած են յ, կ, և այլն։*

### ՏԵՍԻԼ 1.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ ներս է գալիս միջին դռնից

*Ա՜ա... դեռ չէն վերկաց՛ել. այդպէս չէ կարել՛ի... Յիմա կարող՛ է գալ.* поѣздъ *ժա-*

մանակն՛է... դա շատ անյարմար բան՛է... (Մօտենում է կնօջ դռանը և շատ զգուշութեամբ երէք-անգամ խփում է, որի յետևից լսվում է „Кто тамъ?“) Я, я, Катя, ну что, скоро? (Լսվում է „Иду, Маркъ“) Ա՜ա... ուրեմն պատրաստ է: (Մէջքով. տանը գոչում) Да... племянникъ... և նա գալ՛իս է այսօր, յիմա այստեղ՛ կլին՛ի... да, да... Ո՜րկան կաղ՛ցր է ուն՛ենալ արիւնակից պարեկամ... բուն Այաստանց՛ի... և նորան տեսն՛ել այստեղ՛, կեզ մօտ... да...Ես երևակայում եմ, ա՛է որկան ուրախ կլին՛ի Маняս племянникիս հետ. да...

## ՏԵՍԻԼ 2.

### ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ ԵՒ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ.

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Здравствуй, Маркъ! (Մօտենում է համբուրելու):

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ ծոծրակը և քնքշութեամբ հեռանալով

Ոչ՛, ոչ՛, այեր՛էն բարևիր, այերէն... չէ կարել՛ի: Վերջապէս, եաէ մենք մեր այերէնով չխ՛օս՛ենք. Маничкаն էլ չի խօսիլ.—да...

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ахъ, մոռ՛ացայ. բարև ձեզ (Համբուրւում են):

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Չէ կարել՛ի օկխա, չէ կարել՛ի: Нельзя-съ, да! Վաղ՛ուց մենք պէտկէ այդ մաս՛ին մտածէինք: Маничкаին այերէնը շատ յարկաւոր է:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ахъ, սրբել՛իս. տեսնում ես, որ ես էլ, Маничкаն էլ, արդէն մաքուր այերէն ենք խ՛օսում:



ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Այյօ, այյօ, պարտական՛ ենք խօսելու, մեր սուրբ լեզուն՛ է. եաէ մենք չխ՛օս՛ենք, Փրանսիացին, вѣдь, չէ խ՛օսելու այերէն: Այս племянникս գալ՛իս է, ինչո՞ւ նա կարծ՛ի, աէ մենք այերէն չգիտ՛ենք. ինչու նա մեզ վիրայ ծիծաղ՛ի: Չմոռանաս որ նա Այաստան՛ից է գալիս... մեր Այաստան՛ից, ուր մի ժամանակ այ՛երը այնկան արիւն՛ են տալ՛ել—да...

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Յիմա, կարծեմ, поѣздի ժամանակն՛է. Сер-гѣй ը գնաց՛ե՞լ է նորան բերելու:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Այյո, այյօ, վաղ՛ուց է որ գնացել է (Մէ-ջով): Լաւ չեղաւ. մենք պէտքէ ինկն՛երս գնա-յինկ встрѣчать ան՛ելու—да...

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ну, тоже! մի молокососի աւա՜:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ոչ, Катя, այդպէս չէ կարել՛ի. մեծ է աէ պօկր է, պայց իմ племянникս է.—да... Ну, какой-же онъ молокососъ—ему вѣдь 22 года!

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Պայց ինչ արած. այդպէս շուտ վեր կե-նալ չէի կարող՛: Поѣзд-ը ժամի տասին է գալիս, ну?կարել՛ի՞է մինչ ժամի ուտո՛ին վեր կենալ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Да...Ես ներողութիւն կխնդրեմ Բագալ՛ից:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Դու ասում ես, որ դորանկ գիւղացի՞կ են այդո՞... Ուրեմն կարելի է շատ էլ церемониться չլին'ել:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, ճախեցած

Ахъ, Катя! ի՞նչ ես ասում: Նոկա, այդ, գիւղ'ացուն՝ են ասում; բայց երևի Эриваньցի են. լաւ կարող'ութիւն ունենան. միայն հինգ սամար հող՝ ուն'են. այգի, գոմե՞ր. խ'աղ'ող, դեղ՛ձ, տանձ... какъ же!

## ՏԵՍԻԼ 3.

### ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՆԻԱ

ՄԱՆԻԱ, ներս գալով իր սենեակից

Բարև, папа. (Համբուրում է հայրը նորա գլուխը) Բարև, мама. (Նոյնպէս): Папа? Ինչպէ՞ս է այերէն галошъ?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Галошъ?... галошъ!... ну, да... галошъ... —կօլօշ:

ՄԱՆԻԱ

Կօլօ՞շ. Փի, որկան կոպ'իտ է—կօլլօշ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ոչ, ներող'ութիւն. պօլօրօվկին կոպ'իտ չէ.—դա այերէն՝ է:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Դու ասացիր, որ հող'ե՞ր ուն'են. ո՞րկան տեղ է—չգիտ'ես:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ մէջ նշանակալից տալով

Հինգ սամար են գրում.



ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Այդ ո՞րկան տեղ է—հինգ սամ՟արը:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Հինգ սամա՞ր... да... երևի մեծ հող՝ է... а можетъ быть и пятьсотъ десятинъ.—Помѣщикն'եր են:

ՄԱՆԻԱ. նայելով ճաճանակի վերայ:

Այդ ո՞րտեղ է, папа, դորանց հող'ե՟րը:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну? Какъ-же ты въ самомъ дѣлѣ? Ես կարծեմ կեղ աս'ել եմ, որ Эриваньի մօտ Сурмалинскій уѣздъ կայ, այնտեղ, երևի помѣщикն'եր են:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Բայց ասում էիր, որ գիւղ'ացին'եր են:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Այյո, այյո, տէև գիւղ'ացին'եր են. բայց երևի помѣщикն'եր են:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Ахъ, Маркъ, ну какъ-же ты, право? Մէկ ասում՝ ես գիւղ'աց'ին'եր են, մէկ ասում ես Эриваньցին'եր են... և յետոյ՝ „երևի“ да „երևի“: Մի՞տէ այդկանն էլ չգիտ'ես:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ахъ, Боже мой! Ի յարկէ չգիտեմ. вѣдь ես կեղ աս'ել եմ, որ ես հինգ տէ վեց տարեկան էի, որ ինձ Աշտարխան'ից Նոր-Нахичеваньցի Албаловъը պերել է այստեղ—Петербургъ և որդեգրել է... Այդ կարասնական տուականն'ե-

րին՚ է եղ՚ել. և մինչև այս վերջին ժամանակ-ն՚երը, դեռ ես չգիտէի՚ թէ ես եղ՚պայր ուն՚եմ: —Да... Եւ նա իմաց՚ել է, որ ես դեռ կենդան՚ի եմ. գրել էր այն նամակը, որով խնդրում էր Բագալ՚ին բախ՚տաւորացն՚ել:

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Պայց ինչի՞ց գիտ՚ես, որ помѣщик-ն՚եր են: Նորա նամակից երևում՚ էր, որ այնկան էլ մեծ կար՚ողութիւն չպէտկէ ուն՚ենան:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Նա գրել էր, вѣдь, որ նոկա կարավարուում են այդ հինգ սօմար հող՚ով և այս ու այն այգին՚երով... ну, ուրեմն помѣщикն՚եր կլին՚են: 5-сотъ десятинъ, сады виноградные не шутка-съ!

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Իսկ ինչո՞ւ յամար ես բերել տուել Բագալ՚ին:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Նա, արաջին, իմ племянник-ս է. կյանկայի տեսն՚ել, вѣдь ինձ արիւնակից է—да... Իսկ երկրորդ, կյանկայի նորան департаментում տեղ՚աւորել... Նա շատ արաջ կերթայ—да... —կովկաս՚եց՚ի է:

ՄԱՆԻԱ *վերկենալով ծածանակից*

Папа? ապա ինչպէ՞ս է, որ Բագալը չէ եկել այստեղ՝ ամալսարան:

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Երևի заграница է գնաց՚ել:



ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ *մտածելով*

Да... Երևի:

ՄԱՆԻԱ *ոգևորուած*

Ոչ, երևի մի գեղ՚եցիկ երիտասարդ է: Ես երևակայում եմ, папа, որ Բագալը պէտկէ լին՚ի սպիտակ черкеска յակած, позументն՚երով... կուրծկին շարած ոսկէ газыри... մէջկին կապած կլին՚ի ոսկէ поясъ...

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Поясъ—գոտի:

ՄԱՆԻԱ

Ну, լաւ, գոտ՚ի:

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Ахъ, Маня, ինչպ՚էս կարելի է папаին ասել „ну, լաւ գոտ՚ի“! Что это за тонъ! Բագալը հոտէ այստեղ՝ լին՚էր, ի՞նչ կկարծ՚էր կոմաս՚ին:

ՄԱՆԻԱ

Այո, мама, սխալուեց՚ի: Папа? Ն՚երո՞ւմ ես:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ի յարկէ, ի յարկէ ն՚երում՚ եմ: Ի պատ՚իւ մեր հիւրի գոն՚է պէտկէ ն՚երել:

ՄԱՆԻԱ

Ախ. ո՛րկան ուրախ՚ եմ. ո՜րկան ուրախ՚ եմ, мама... (Հօրը) Папа? Բագալի գոտ՚ին ոսկէ կլին՚ի, թէ արծաթ՚է:

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Ахъ, Маня! Ի՞նչ գիտէ папа-ն, թէ Բագալի գոտ՚ին, ոսկէ կլին՚ի թէ արծաթ՚է... Это

смѣшно, право!

ՄԱՆԻԱ

Լաւ, мама, հօրէ արմատ՚ից էլ լինի, պայց անպատճառ՝ ռուսէցրած կլինի: Հա. գլխ՚ին էլ կլինի՝ սպիտակ черкесскій папахъ. Չէ՞, папа.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, Маня, ты надоѣдаешь, право? Ես ինչ գիտ՚եմ՝ թէ черкесскій папахъ է գլխ՚ինը, թէ парижская шляпа.—Այդ միևնոյն բան՚ը չէ՞:

ՄԱՆԻԱ զարմացած

Ինչպէ՞ս... Черкеска՛ի վերայ шляпа?... Դա անկարելի է, папа! Տեսն՚ո՞ղն ինչ կասի—черкеска և шляпа!...(Մի փոքր մտքից. Ոգևորուած) Օ՜հ որքան ուրախ՚եմ мама! Ես երևակայում եմ. գեղ՚եցիկ երիտասարդ. պոկրիկ պոկրիկ բեխ՚եր, блондинъ, кавказская черкеска, папахъ, кинжалъ весь въ золотѣ, поясъ, позументы... Օ՜հ, (Ծափահարելով և ցած թռչելով). որքան ուրախ եմ... ո՜րքան ուրախ եմ... և դա—այդ красавецը—мой двоюродный братъ!... Да, папа ին՞չպէս, է այերէն двоюродный братъ.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Двоюродный братъ!... двоюродный... (առանձին) чертъ его знаетъ!... (Բարձր) Двоюродный... այ, յո... двоюродный... դա՝ կարելի է ասել... ըըը երկրորդական եղ՚պայր:

ՄԱՆԻԱ

Ֆի՛. երկրորդական եղ.պայր: (Նստում է ծա-ծանակի վերայ և երեսն աբաց կում հանդարտ ծածուած):



ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Маня!

ՄԱՆԻԱ

Ахъ, мама, ну ին՞չպէս կարել՚ի է ասել երկրորդական եղ՚պայր... Вѣдь это не красиво!

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Это не твое дѣло! Այդ այէրէն, է... Վեր-ջապ՚էս ինչ պակաս՚ է—երկրորդական եղ՚պայր: —Это, даже, нѣсколько... благозвучно...

ՄԱՆԻԱ ծաղրելով

Ну, воображаю, благозвучно...

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Маня, Маня!.. Ի՞նչ է պատահել քեզ այսօր:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Да... Այդ պօլօրը շատ գեղ՚եցիկ է. պայց դուկ պէտկէ յագնուէք: Չեր շօրերը պօխ՚էկ. այդպէս չէ կարել՚ի—да... Катя, այսօր ճաշի յամար ինչ ես заказъ տուել:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Արանձին ոչինչ. միայն աս՚ել եմ, որ десерт-ի յամար пломбиръ պատրաստեն:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, ինչպէս կարելի է, душка, միայն пломбир-ի մաս՚ին մտածել... Դօրանով մենկ չենկ կարօղ զարմացն՚ել մեր Բադալ՚ին:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Խօջարարը շատ լաւ գիտէ, որ այսօր մենկ մեր племянник-ին ենկ սպասում

ՄԱՆԻԱ վեր կենալով հօրը

Իսկ ինչպէս է այերէն племянникъ?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Племянникъ?.. да... племянникъ... ну, մի այդպիսի բան՝ էլ այդ կլինի: (Յանկարծ վերյիշելով) Ахъ да!.. եղպօր որդի կարելի է ասել:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Այո, այդ ուղիղ է. եղպօր որդի.

ՄԱՆԻԱ

Ахъ, ինչպէս գեղեցիկ անուն է (ձեռքը թաղցը տրտմանելով) Բա-գա՜լ... Բա-գա՜լ (սենեակում պտտելով ծափ տալով) вотъ прелесть! (ձեռքը թափելով) Բա-գա՜լ...

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, ну, դու խնդրեմ շատ մի երեւակայիր... Да, кстати, ճաշի մասին... Երեկուայ մեր горчица-ն — ա՜յ ա՜յ ա՜յ... ինչպէս կարելի է: Այսօր էլ այդպիսի горчица սեղանի վերայ չլինի... Вѣдь это скандалъ! Եթէ անկարծ Բագալը երեկ եկած լինէր. ну, ինչպէս կարելի է:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ахъ. մեր աղախինը ինչպէս է պատմել... Ես նորան մի անգամ օրը նկատեցի, որ подавать չանի, պայց կրկին դրել էր սեղանի վերայ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, ի սէրն Աստուծոյ, զգոյշ կաց, որ այսօր գանէ չերեւայ այդ горчица-ն. Հրամայիր տան ծառաներին. ամենակարեւոր ճաշակի խնդիր անտանելի է և, անկարծ, Բագալի առաջ...а?



ՄԱՆԻԱ

Папа, ինչ կնշանակէ մանանեխ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Մանանե՞խ... մանանե՛խ... да... մանանե՛խ... ну, да... մանանե՛խ... այդ, բլր... պոկրիկ-պոկրիկ տանձիկնե՞ր են:

ՄԱՆԻԱ զարմացած

Տանձիկնե՞ր... (Գլուխը ճակատակէտ շարժելով) Չէ, папа, իսկ իմ ուսուցիչս, պարոն Արշարունին ասում է, որ մանանեխը горчица-ն է:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ խոկուն

Ну, да... горчица-ին էլ կարելի է ասել:

ՄԱՆԻԱ

Իսկ տանձիկնե՞ր...

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, շփոթ և անհամբերութեամբ

Այո, կան մի տեսակ տանձիկներ, որոնց մանանեխ են ասում:

ՄԱՆԻԱ

Երևի, папа, горлица ին են այերէն մանանեխ ասում:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Այո, երևի: Բայց ինչու горлица-ին պէտք է ամեն մանանեխ և ոչ թէ մի ուրիշ տանձի:

ՄԱՆԻԱ

Որովհետև горлица — горчица նման են իրար:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Да, впрочемъ... կարող է լինել: Դու, Маня,

ես ինչպէս տեսնում եմ, կարող ես լաւ филологъ լինել:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ վեր կենալով

Маня, ժամանակն՝ է. պէտք է շորդ փոխել:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ խնդալով

Да, да... Ինչպէս կարելի է... Ամէն բոպէ կարող՝ է գալ. իսկ դուք առաւօտեայ капот-ի մէջն էք:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ գնալով

Գնանք, Маня.

ՄԱՆԻԱ ծռմռալով գնում է մօր ետևից

Գնանք, мама.

## ՏԵՍԻԼ 4.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Эх, эх, эх... ժամանա՜կ... Ու եղբօրս որդին գալիս է այն տեղերենկից, որտեղ՝ թաղուած՝ են իմ հայրս, մայրս. պապերս-да... այն տեղերից, ուր մի ժամանակ յինգ վեց տարեկան ասկուս եմ եղել... էն օդը շնչել, էն ջուրը խմել-да... Ո՜րքան ուրախալի է, ո՜րքան ուրախալի է... (Միջոց: Նայում է ժամացոյցին) Բայց ինչո՞ւ այսքան ուշացան... Ես անհամբեր սպասում՝ եմ, իսկ նոքա չեն մտածում շուտ գալու-да... (Գնում է):

## ՏԵՍԻԼ 5.

Ներս է մտնում Բաղդասարը Սերգէյի առաջնորդութեամբ: Նորա դէմքը մի կոշտ ու կոպիտ գիւղացու դէմք է. շո-



րերը գիւղական, հին. վերան ամէն ինչ տարօրինակ է, ամեն. ֆաֆախը գլխից չէ վերցնում. ոտերը շատ դժուարութեամբ է շարժում, ինչպէս օրինակ նը շարժէր մի մարդ՝ մաքուր և նոր տաշտակի վերայ: Նա շշմած է. բերանը բաց է մնացել այս շրջապատին նայելով:

ՍԵՐԳԷՅ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐ

ՍԵՐԳԷՅ

Вотъ-съ, извольте подождать здѣсь. пока я доложу. А шапку (կատակաբանութեամբ վերցնելով Բաղդասարի գլխից գլխարկը և դրալով իրեան) всетаки снимите. Вотъ, такъ!

ԲԱՂԴԱՍԱՐ զարմացած նայելով նրան

Հը՞ը... ախր գլուխս մրսում ա:

ՍԵՐԳԷՅ

Что? Нельзя-съ! Въ комнатахъ въ шапкѣ неполагается! Ихъ превосходительствамъ очень непріятно будетъ это. (Բաղդասարը կրկին գլխարկը գլուխն է դնում): Аа... опять надѣлъ! Ну ужъ племянникъ! Откуда выкопали? Вотъ чучело?! (Գնալով) Пойду доложу.

## ՏԵՍԻԼ 6.

ԲԱՂԴԱՍԱՐ մենակ

Ջանըմ, էս ո՞ւր եմ ընկել ես... Էս ու՞ր են բերել ինձ... Ես հմիկ ինչ անեմ ըստեղ... Թա-ա՜... Ո՞նց են մտնգալիս, էս գեննի վրայ ոտ-

1001 / 4083

թանք... (Զարմացած) Նյա, նյանյա *)... (Հեռանում) Տօ ջանըմ, էս իմ տեղը չի՝ վալլա, բիլլա էս իմ տեղը չի... Էս ինչ քէալագի մէջ ընկայ ես։

(Լսւում է միւս սենեակից Մարկ Ադամիչի ձայնը. ну, что, пріѣхали наконецъ? А племянникъ? Լսւում է Սերգէյի պատասխանը. они въ этой комнатѣ-съ. Բադալը այս ձայները լսելով և վախենալով, միջի դրան մօտ պատին է կպչում և ձգւում, այնպէս որ միջին դրա-նից ներս մտնողին չէ նկատւում)։

## ՏԵՍԻԼ 7.

### ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ ԲԱԴԱԼ ԵՒ ՑԵՏՈՅ ՍԵՐԳԷՅ

(Մարկ Ադամիչն ուրախ, քաղցր ժպիտով ներս է մտնում, որ բարևի, համբուրի, գուցէ և ուրախութեան արտասուք թափի, իւր սրտի, ջերմեռանդ սրտի կարօտն առնի, բայց զարմացած՝ բեմը դատարկ է գտնում. յետ է դառնում, որպէսզի Սերգէին հարցնի թէ ուր է եղբօր որդին և նկատում է դրան մօտ, պատին կպած և ձգուած Բադալին)։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ զարմացած և վախեցած

А! .. ты что тутъ? (Բադալը, աւելի պինդ կպչելով պատին, նայում է ուղիղ նորա աչքերին) Кто ты таковъ? .. Кого тебѣ нужно? .. (Առանձին) Ахъ, вѣрно мазурикъ! (Բադալին) А? Какъ ты смѣешь, мерзавецъ! (Զանգակը նեարդային շարժումով հնչեցնում է, իսկոյն ներս է գալիս Սերգէյը. Սերգէյին) Какъ-же ты это, а? .. (Ցոյց տալով Բադալի վրայ, բարկացած) Въ часть, въ часть его сей часъ!

*) Դերակատարը տառացի չպէտք է կարդայ «նյան». —սա մի հնչիւն է, որ միաժամանակ ց-ի և ծ-ի ձայն է հանում։ Եթէ կպցնել լեզուի ծայրը վերևի ատամների արմատներից և ապա այդտեղից օդ-ներս ծծել միաժամանակ բաժանելով լեզուն բոլորովին կպած տե-ղից — կստացուի ցանկացած գիւղացու հնչիւնը, որը մի դէպքում բացասական («ոչ» բառի) նշանակութիւնն ունի, իսկ միւս դէպքում —խիստ զարմացական արտայայտութեան։



ՍԵՐԳԷՅ զարմացած

Кого это, ваше превосходительство?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Вотъ этого мазурика! Не видишъ, что ли, балбесъ! Тащи его въ часть!

ՍԵՐԳԷՅ աւելի զարմացած

Кого-же, ваше превосходительство? Племянника-то?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Что-о?! Какого племянника, шутъ ты гороховый?!

ՍԵՐԳԷՅ

Какъ-же-съ. Вѣдь они вашъ племянникъ!

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Вотъ тебѣ разъ! .. Послушай ты, право, очумѣлъ!

ՍԵՐԳԷՅ

Да, какъ-же-съ. А вотъ его видъ. (Հանում է գրպանից թուղթը և տալիս է Մարկ Ադամիչին) Попутчикъ его передалъ мнѣ, а я долженъ отнести въ Полицію-съ.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, հետաքրքրուած առնելով անցագիրը

Подай, подай... (Շարունակ նայում է անցագրին)։

ԲԱԴԱԼ, աչքը ընկնելով Մարկ Ադամիչի կրծքի աստղին

Պահ, սա էլ միր կայրնատի նման աստղ ունի, տօ՛։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ կարդալով

Да! .. Бадалъ Даниловъ Адамовъ... (Ձեռքին

կարդալու— յետոյ անցագիրը բռնած. աչքը գցում է Բադալի վերայ. շփոթուած վհատուած է. ձայնից) Ты... того... ступай! (Սերգէյը գնում է)։

## ՏԵՍԻԼ 8

### ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ ԵՒ ԲԱԴԱԼ

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *մօտենալով Բադալին*

*Դու ո՞վ ես...* (Բադալը չէ պատասխանում)։ *Դու ո՞վ ես, ասում՛ եմ...*

ԲԱԴԱԼ, *կողք ու կողքի, վախեցած*

*Հը՞ը...*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *ներքին յուզմամբ. աչքը շրջելով գցելով հանդերձարանի վերայ*

*Ա՞յս ինչ բան՛ է։* (Բադալին) *Կօ անո՞ւնդ ինչ է...* (Պատասխանի փոխարէն՝ Բադալն աչքը գցում է նորա աչքերին) *Անո՞ւնդ ինչ է...* (Առանձին) Глухой, что-ли?.. *Այ տղա՛յ, անո՞ւնդ ինչ է...*

ԲԱԴԱԼ, *բարձր և նայելով կողք ու կողքի*

*Բադալ։*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *կանգնած տեղում վեր ու վար նայելով նորա անտաշ կազմին*

*Ինչո՞ւ ես այդպէս գոռում, սիրելի՛ս*-да... Папа-*ի՞դ անունն ինչպէս է...* а?.. папа-*իդ... հայր՛իդ, հայր՛իդ։*

ԲԱԴԱԼ, *նայելով*

*Ախուբի՞ս—Դանէլ։*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *առանձին*

Да!.. *պօլօրովին ճշմարիտ է.—Ադամով... Ադամ իմ հայրս է եղ՛ել.*—да... *Բայց սա ինչո՞ւ*



*այսպէս է։* (Մտամոլոր նայելով Բադալին ոտից գլուխ, որը երկիւղով շարունակ նայում է Մարկ Ադամիչի աչքերին)։ *Սա կատարեալ վայրենի է.*— да... *Պէտկէ սորան դեռ՝ արդ ու պօրդ ան՛ել...* (Գալով առաջ և ցուցնելով իւր տեղը) *Նստ՛իր, Բադալ, նստ՛իր, տեսն՛ենք...* (Նայելով վերան) Ну?.. *Ինչո՞ւ ես կանգն՛ել. նստի՛ր։*

ԲԱԴԱԼ

*Հը՞ը։*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *յետ-ետ անելով*

*Նստ՛իր, նստ՛իր այդտեղ՛։*

ԲԱԴԱԼ

*Նստե՞մ։*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну да, *այլ... նստ՛իր։* (Առանձին) Дикарь, дикарь! (Նորէն կարդում է անցագիրը)։

(Բադալը՝ ձեռքերը յետ տանելով և բռնելով ճօճանակի երկու քաղուկները՝ անվստահութեամբ կամենում է նստել նրա նստելատեղի ծայրին. ճօճանակը գլորւում է առաջ և իբրև խափ ընկնում է նրա գլխին, երբ նա, փոխանակ ճօճանակի, նստած է յատակի վերայ։ Այս խուլ շրփթրփոցի վերայ վեր է թռչում և կանգնում Մարկ Ադամիչը ու զարմանքով նայում է Բադալի յիմար դրութեան վերայ. վերջինը զգուշութեամբ և կոտրած վեր է կենում)։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

*Ինչ՞ պատահեց։*

ԲԱԴԱԼ

*Ըսկի, աղա, չիմացամ.* (Զարմացած նայում է ճօճանակին և յետոյ շարժում է նրան, կամենալով գտնել նրա ոտները կամ իր վայր ընկնելու պատճառը)։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, да... *դու այդտեղ՛ չես կարող՛ նստել. եկ այստեղ, եկ, այ...* (ցոյց տալով բազկաթոռի կամ

դէմքով դէպի ներս) այստեղ՝ նստի՛ր, այստեղ՝։

(Ինքը նստում է իւր տեղը, մտքով զբաղուած: Բադալը մեքենայաբար և զգուշութեամբ ոտերը շարժելով, մօտենում է ցոյց տուած բազկաթոռին կամ դիվանին), նախապէս շարժելով և համոզուելով, որ սա ճօճանակի պէս շարժուն չէ, կամենում է այս անգամ խոր նստել բազկաթոռում, բայց նորա ճկուն զսպանակները տանում են շատ խոր: Բադալը, թուքը կպած, ոտերը և ձեռքերը յանկարծակի երկիւղից դէպի վեր բարձրացնելով, կարծես ուզում էր բռնուել մի բանից. և այսպէս բազկաթոռում խրուելու ժամանակ, մի այնպիսի կոշտ և անդուր ձայն է հանում, որ Մարկ Ադամիչը լեղապատառ և սարսափած վեր է թռչում տեղից և շտապում է դէպի նա, իբր օգնութեան հասնելու):

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Էլ՞ ինչ պատայեց։

ԲԱԴԱԼ վեր թռչելով և կանգնելով նստած տեղից

Ըսկի, աղա: (Վախեցած նայելով բազկաթոռին և վերը տուրելով՝ առանձին.) Ջա՛նըմ, է՞ս ինչա, тo... էլ քեալագ չկա՞յ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, да!.. Նստ՛ել չգիտ՛ես.—дa... ուրեմն կանգն՛իր, կանգն՛իր: (Ինքը նստում է իւր նախկին տեղը)։

---

# ՏԵՍԻԼ 9

## ՆՈՅՆՔ ԵՒ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, ընկտելով Բադալին

Ա՞յս ինչ է, Մարկ, ինչ պատայեց այստեղ... (Տեսնելով Բադալին և վախենալով, սուր. բայց կամաց ձայն է հանում) Այս ի՞նչ է. ինչ՞ու ես ներս թող՛ել այս мазурик-ին:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Мазурикъ!.. Ես էլ էի այդպէս կարծում. բայց...



ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ուրեմն циган-ն՛երի՞ց է. այո՞։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, ոչ... Սա իմ племянник-ս է:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, վախեցած յետ քաշուելով

Ինչ՞պէս... այս վայրենի՛ն:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Да...

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, հիացմունքով նայելով Բադալի վերայ

Вотъ такъ—такъ!!. (Բադալը շշմած նայում է մէկ սրա, մէկ նորա վերայ ոչինչ չհասկանալով)։ Եւ դու կամենում՛ ես սորան департамент-ում տեղ՛աւորե՞լ:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, вотъ еще! Департамент-ում!.. Պէտք է սորան յետ ուղ՛արկել, ապա թէ ոչ մենք այստեղ՝ կխ՛այտառակուենք... Ինչպէս կարելի է..

ԲԱԴԱԼ, առանձին

Տօ՛ ջանըմ սորանք էս ո՞նց են խօսը՛մ, անջազ եմ հասկանըմ։ Չի՞ պօկի լիզու ա:

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, մտածելով

Ըըը... Բադալ:

ԲԱԴԱԼ, կոպիտ և շատ անախորժ ձայն հանելով

Համմէ:

(Եկատերինա Գէորգիեվնան ցնցւում է և ականջները փակում)։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Իսկապէս որտե՛ղ է գտնւում ձեր գիւղը:

ԲԱԴԱԼ, նոյնպէս

Հը՞ը։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Эривань-ի մօ՞տ է, թէ շատ է յեռ՚ու Эривань-ից։

ԲԱԴԱԼ

Երևանից մեր գեղը երկու օրւայ ճանփայ ա։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, Բադալին

Ո՞րկան հող ուն՚էք այնտեղ։

ԲԱԴԱԼ

Սկի աղա,—հինգ սոմար։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ո՞րկան տեղ՚ է յինգ սոմարը։

ԲԱԴԱԼ

Սկի. կէս խալվարէն տեղ ա, ցորէն ենք ցանըմ։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Հըմ... Կան՚ի՞ պուդ ցորեն՚ է ցանւում այդ հող՚ում։

ԲԱԴԱԼ

Թէ ասեմ 15 փութ. կէս խալվար էլի...

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

15 պո՞ւդ... (հիասթափուած) Вотъ такъ-такъ!!.. не болѣе одной десятины!..

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Իսկ կա՞ն՚ի այգի ուն՚էք։

ԲԱԴԱԼ

Իգ՞ի։



ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, да, այո։

ԲԱԴԱԼ

Եանի թէ ո՞վ, մեե՞նք։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Այո, իյարկ է։

ԲԱԴԱԼ

Մեզ իգին ուստա որ։

## ՏԵՍԻԼ 10.

## ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՆԻԱ

ՄԱՆԻԱ, նոր հագուստով և ճամպրուկով ներս է մտնում

Папа, Сергѣй-ը եկ՚ել է. իսկ ձեր племянник-ը...

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ահա ն՚երկայացնում՝ եմ կեզ իմ племянник-իս։ Կապա՛էի՞ր։

(Մանիա, տեսնելով Բադալին, սուր ճիչ է արձակում, կանգնած տեղը վէր է ընկնում և Բադալը)։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՕՐԳԻԵՎՆԱ

Маня! Маня! Что съ тобой, дорогая?

ՄԱՆԻԱ

Ու՚հ. ինչպ՚էս վախ՚եցայ. այս ո՞վ է, мама?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Կեզ ասում՝ եմ, որ племянник-ս է։

ՄԱՆԻԱ հիասթափուած և սարսափով

Что?!.—Իմ երկրորդական եղ՚պա՞յրս։

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

*Այո*, Маня, *այո. ես պօլօրովին զարմացած եմ:*

ՄԱՆԻԱ, *արտասուելով*

Да неужели же это пра-а-авда?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *կտրուկ*

Ну, что же дѣлать, когда правда.

ՄԱՆԻԱ, *ընկողմանելով յարմարուել աթոռ մօտի հետ*

*Ոչ, ոչ. չի կարող լինել... Անկարելի բան է, անկարելի.*

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, *նկատելով*

Маня!..

ՄԱՆԻԱ *մի քիչ խիճելով յառաջին*

Да вѣдь онъ, право, чудовище, мама.

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Ну, ну, довольно!—да... (*Բադալին*) *Ձեր գիւղը մե՞ծ է:*

ԲԱԴԱԼ

*Հը՞ը.*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

*Ձեր գիւղը մե՞ծ գիւղ է:*

ԲԱԴԱԼ

*Չէ՜ հա... Տասնօխտ, տասնութ տուն անջաղ.*

(*Մանիան և Եկ. Գէօրգիեվնան ծիծաղում են Բադալի ձայնից*):

ՄԱՆԻԱ

Мама, дикарь, право, дикарь! Какъ онъ говоритъ! Какія у него манеры!! Это ужасно!

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Чтоже дѣлать, дорогая.



ՄԱՆԻԱ

Мама. *ապա յարցրու Բադալին. մէ՞կ նօրանք* бонна *կամ* гувернантка *չունե՞ն իւրեանց տանը:*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *հեգնաբար*

*Ինչպէս չէ.* рояль-*ի վերայ էլ նուագել գիտէ սա:*

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

*Այո... երևում է ձեռքերից...* Маркъ, *սա նստի. ինչո՞ւ է կանգնել:*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

*Ինչպէս նստի, կանգնի որ նստել չգիտէ:*

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ ԵՒ ՄԱՆԻԱ *զարմացած*

*Նստել չգիտէ՞:*

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

*Փի՜ղ է, ինչ է:*

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Да, повидимому изъ слоновой породы.

ՄԱՆԻԱ, *մտածմունքով և հեռուն նայելով Բադալի վերայ, ասում է*

*Սպիտակ* черкеска, позумент-*ներ*, кинжалъ въ золотѣ, *սպիտակ* папахъ, блондинъ, *պօկրիկ պօկրիկ բեխիր...* (*բարկացած*) Фи! вотъ паршивая морда!?.

ԵԿԱՏԷՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ (*ընդհատում նայելով վերան*)

Какой онъ жалкій!

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, *խոր մտածմունքից յետոյ Բադալին*

*Իսկ յա՞րդ ինչ բանի է.*

ԲԱԴԱԼ

Աֆո՜ւս.—Կատեպան*) ա, աղա։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ ԵՒ ՄԱՆԻԱ, միասին

Аа!.. капитанъ?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, մի փոքր սարսափած, կնոջը

Вотъ видишъ?

ՄԱՆԻԱ

А почему же онъ, папа такой... վայրենի՛։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Ինչու ես կանգնե՛լ. նստի՛ր-же, Բադալ։

ՄԱՆԻԱ անունը զզուանքով և կոպիտ արտասանելով

Բա-դալ... какое противное имя!.. (աւելի զզուանքով) Բա—դալ...

(Բադալը ծոցից հանեց մի նամակ և տալիս Մարկ Ադամիչին։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Այդ ինչ է, նամա՞կ է։

ԲԱԴԱԼ

Չէ, աղա, գիր ա։ Աֆուս ա տուել, որ տամ քե։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, Մարկին

Что такое ապու?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, շրջելով կնոջ հարցը, Բադալին

Ну, да, նամակ է։

ԲԱԴԱԼ

Չէ, աղա՛, գիր ա, գի՛ր։

*) Այգեպան, բաղման, садовникъ.



ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, վերցնելով նամակը երկու մատերի ծայրով

Что за пакость! (Նա և միւսները զզուանքով նայում են նամակին)։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ

Դու այդտեղ նստի՛ր, Բադալ. մենք յիմա կկարդանք։ (Մարկին) Вѣрно отъ брата?

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Должно быть. (Զգուշութեամբ բացելով մի փոքր ծամածռելով) Фу!

(Մատների ծայրերով և զզուանքով սկսում է բաց անել կեղտոտ նամակը շատ մեծ զգուշութեամբ, որ լիբը կեղտը մատներին չըկպչի. կնոջ և աղջկայ ուշադրութիւնը գրաւած է նամակով։ Իսկ միևնոյն ժամանակ Բադալը փնդրում է աչքերով սենեակում մի նըստելու տեղ. նա ըստ երևոյթին վախենում է աթոռներից, բազկաթոռներից և ճօճանակից. նորա ուշադրութիւնը կանգնում է պատի մօտ դրած լօմբերնիյ գեղեցիկ սեղանի վերայ. մօտենում է, մէջքը դարձնում է սեղանին և, ձեռքերը յետ տանելով, բռնում է սեղանի կողքից և կամենում է ձեռքերով մարմինը բարձրացնել սեղանի վերայ նստելու. բարձրանալու ժամանակ, սեղանը իւր կողքի ծանրութիւնից, իւր դիրքը, հաւասարակշռութիւնը կորցնում է, վայր է ընկնում, իսկ Բադալը սեղանից հեռու է գլորւում։ Բոլորեքեան սաստիկ վախեցած սուր ճիչ են արձակում։ Հասնում է Մարկ Ադամիչը, ձեռքից վայր գցելով հագիւ բաց արած նամակը։)

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, բարկացած, վայր ընկած Բադալին

Այդ ինչ արեցի՛ր... կոտրեցի՛ր։

ԲԱԴԱԼ, գետնից վեր կենալով և վախեցած

Չէ, աղա, ոչ մի տեղս չկոտրուեց։

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ, աւելի բարկացած

Նստ լաւ, շատ լաւ, կօ ոչ մի տեղդ չըկոտրուեց. բայց սեղա՛նը սեղա՛նը կոտրուեց։ (Իսկոյն ձեռք է տալիս)։

ԲԱԳՐԱՏ, ծոր արտըծելով

Ըմտօյնէլ չի կողրուէ՝ ալա։

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԳԷՈՐԳԻԵՎՆԱ, ճարճատելով

Зачѣмъ онъ лазилъ на столъ?

ՄԱՆԻԱ, հեգնելով՝ արտասանելով

Ну какой онъ сынъ капита-ана?!.

ՏԵՍԻԼ Ա.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍԵՐԳԷՅ

ՄԱՐԿ ԱԴԱՄԻՉ

Сергѣ ,надо поскорѣе найти ему попутчика до Эривани, а пока отведи его въ людскую; здѣсь ему не мѣсто.

ԲԱԳՐԱՏ, փնթելով

Նաղի ջա նաղի, նաղի ջա նաղի...

ՎԱՐԱԳՈՅՐ

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА
Հ.Ս.Ա.Հ. ԳՐԱԴԱՐԱՆ Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0432551